ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ
(Հայկ Գյուլիքևխյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Վ. Վ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

Լրացավ պրոֆեսոր Հայկ Գյուլիքևխյանի ծննդյան 100-ամյակը։ Հայաստանում սովետական կարգերի ստեղծման առաջին տասնամյակներին հայ մտավորականության շրջանում նա ճանաչված էր իբրև փիլիսոփա-գրականագետ, գաղափարական մարզի հմուտ պրոպագանդիստ, որն իր ժամանակին զգալի դեր է խաղացել աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գործում։ Հ. Գյուլիքևխյանը լենինյան կուսակցության առաջին սերնդի հայ գործիչների շարքում իր արժանի տեղն ունի։ Մեծ էր մարքսիստ գիտնականի երախտիքը գիտության, արվեստի ու գրականության բնագավառների մտավորականության գաղափարական խմորման ասպարեզում։

Սովետական Հայաստանի մտավորականների առաջին սերնդի բոլոր խավերի ներկայացուցիչները՝ գրողները, գիտնականները, բժիշկները, ճարտարապետները, թատրոնի ու կինոյի աշխատողները, ուսուցիչները, ուսանողները, կուսակցական ու կոմերիտական ակտիվը նրան համարում էին տեսաբան ուսուցիչ, բանիմաց խորհրդատու, որին անկեղծորեն ու ակնածանքով սիրում և հարգում էին իբրև հմուտ մանկավարժի, որը հաջողությամբ աճեցնում էր տեսական ու գիտական կադրեր։ Ինչպես ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանն է վկայում Գյուլիքևխյանի մասին գրած իր հուշերում, «երիտասարդ կադրերի մտքերի ու զգացմունքների զարգացմանը նա օժանդակում էր ոչ միայն իր հանրագիտական հմտություններով, այլև իր առինքնող հմայքով, պարզ ու վճիտ իր բնավորությամբ ու անհատականությամբ» («Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 3)։

Պրոֆեսոր Հայկ Գաբրիելի Գյուլիքևխյանը ծնվել է 1886 թ. հունվարի 6-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում, ժողովրդական ուսուցչի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է հայրենի քաղաքի ռեալական ուսումնարանում, որտեղ էլ սկսվում է նրա մտքի զարթոնքը։ Ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին էլ նա սկսում է ծանոթանալ հասարակական գիտություններին, մարքսիզմի ուսմունքին, որը արդեն մուտք էր գործել հայ իրականություն։

Հայկ Գյուլիքևխյանն իր հասարակական-կուսակցական գործունեությունը բաժանում է երեք շրջանի։ Առաջին շրջանն իր մեջ առնում է 1905 թ. և շարունակվում է մինչև 1906 թ. հուլիս ամիսը։ Այդ շրջանում նա և իր դպրոցական ընկերներ Աշոտ Հովհաննիսյանը, Իսահակ Դովլաթյանը և ուրիշներ Շուշիում կազմակերպում են սոցիալ-դեմոկրատիային համակրողների խմբակներ իրենց ուսումնարանի բարձր դասարանների աշակերտներից, քաղաքի արհեստավորներից, հոգևոր սեմինարիայի սովորողներից։ Նրանց կազմակերպած այդ խումբը դառնում է հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մի մասը, որը հարում էր բոլշևիկյան կուսակցությանը։ Անմիջապես կապված լինելով սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, նրանք տարածում էին կու-

սակցական գրականություն և իրենք էլ ակտիվորեն մասնակցում կուսակցական մամուլին, ագիտացիոն աշխատանք ծավալում քաղաքի ուսանողության և աշխատավորության շրջանում։

Գյուլիքևխյանի կուսակցական գործունեության երկրորդ շրջանը ընդգրկում է 1906 թ. ամռանից մինչև 1918 թ., երբ նա Շուշուց մեկնում է Գերմանիա իր ուսումը շարունակելու։ 1906 թ. մինչև 1914 թ. պատերազմը Գերմանիայի մի շարք քաղաքներում նա ուսումնասիրում է փիլիսոփայություն, քաղաքատնտեսություն, գրականություն ու եվրոպական լեզուներ՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն։ Գերմանիայում Հ. Գյուլիքևխյանն ունկնդրում է աշխարհահռչակ փիլիսոփաներ Վիլհելմ Վունդտին, Վինդելբանդին, Հեկկելին, Բյուխներին և ուրիշների։ 1914 թ. ավարտում է Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը։ Նրա դոկտորական դիսերտացիայի պաշտպանությանը և հայրենիք վերադառնալուն խանգարում է 1914 թ. պատերազմը։ Նույն թվականին, որպես ռուսահպատակ և քաղաքականապես անբարենպաստ տարր, ձերբակալվում է գերմանական իշխանությունների կողմից և նետվում կենտրոնացման ճամբար, որտեղ մնում է մինչև 1918 թ., սկզբում որպես քաղաքացիական գերի, իսկ 1916 թ. մինչև 1918 թ.՝ իբրև ռազմագերի։

Գերմանիայում ուսանելու տարիներին Հայկ Գյուլիքևխյանը կտրված չի եղել քաղաքական, կուսակցական կյանքից, ակտիվորեն մասնակցել է գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ձախ, այսինքն հեղափոխական թևի Լայպցիգի, Հայդելբերգի կազմակերպությունների աշխատանքներին, հոդվածներով հանդես է եկել «Լայպցիգեր ֆոլկսցայտունգ», «Հայդելբերգեր ֆոլկսբլայտեր» թերթերում, որոնց խմբագիրներն էին Ռոզա Լյուքսեմբուրգը և Կարլ Լիբկնեխտը։ Այդ տարիներին էլ նա ծանոթանում և սերտորեն կապվում է գերմանական սոցիալ-դեմոկրատների այդ և մյուս ղեկավարների հետ։ Պատահական չէր, որ Գերմանական Դեմոկրատական Հանրապետության առաջին պրեզիդենտ Վիլհելմ Պիկը, երբ առաջին անգամ Մոսկվա էր ժամանել, հիշել էր Հայկ Գյուլիքևխյանին ու հարցրել նրա մասին։

Գերմանիայում սովորելու տարիներին Գյուլիքևխյանը ուսումնասիրում է Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, կարդում է Վ. Վ. Պլեխանովի «Մոնիստական պատմահայեցողության հարցի շուրջը» աշխատությունը, նամակներ է գրում նրան, որոնց մի մասը պահպանվել է Լենինգրադի Պլեխանովի թանգարանում։

1914—1918 թթ. գերմանական համակենտրոնացման ճամբարում եղած ժամանակ, չնայած գերության ծանր պայմաններին և դաժան հսկողությանը, նա ռուսահպատակ ռազմագերիների շրջանում տանում է ագիտացիոն աշխատանք, կազմակերպում ագիտատորների խմբակներ, կարդում է դասախոսություններ, զրույցներ անցկացնում մարքսիստական տեսության տարբեր հարցերի շուրջը, մերկացնում է գերմանական սոցիալ-շովինիստների դավաճանական դիրքը, բացատրում է պատերազմի իմպերիալիստական բնույթն ու ցալանչիական նպատակները։

Գյուլիքևխյանն իր կենսագրականում հիշատակում է այն մասին, որ գերմանական գերության տարիներին իրենց ագիտացիոն աշխատանքները չէին սահմանափակվում ճամբարի սահմաններում։ Բոլոր կողմերից շրջապատված լինելով Ռուսաստանից քշված բանվորներով և գյուղացիներով, մենք, գրում է Գյուլիքևխյանը, ավելի ուժեղացրինք մեր աշխատանքները փետրվարյան հեղափոխության շրջանում, երբ ճամբարային հոծ մասսան և շրջապատի լեհ գյուղացիությունը պահանջում էին պարզաբանել Ռուսաստանում կատարվող իրադարձությունների քաղաքական իմաստը։

1918 թ. օգոստոսին ՌՍՖՍՀ Բեռլինի սովետական դիվանագիտական ներկայացուցիչ Իոֆեի միջամտությամբ Հ. Գյուլիքևխյանին հաջողվում է ազատվել գերմանական գերությունից և փոխադրվել Մոսկվա։ Օրգանիզմի ուժասպառության ու ներվային հիվանդության պատճառով նա սկզբնական շրջանում չի կարողանում աշխատել։ Որոշ ժամանակ անց, մի փոքր կազդուրվելուց հե-

.տո, նրան ուղարկում են Աստրախան, որտեղից էլ սկսվում է նրա կյանքի ու գործունեության նոր՝ սովետական շրջանը։ Աստրախանում սկզբում նշանակվում է 11-րդ բանակի քաղրաժնում իբրև դասախոս, բանակային կուսդպրոցի պետ, ապա բանակի «Красный воин» թերթի խմբագիր։ Հ. Գյուլիքևխյանից հետո այդ թերթի խմբագիրը եղավ ականավոր սովետական գրող, Ջապանյան դիվիզիայի պանծալի կոմիսար Դմիտրի Ֆուրմանովը։

Աստրախանում Գյուլիքևխյանը միաժամանակ սկսում է զբաղվել նաև հայկական գործերով, աշխատում է Հայկական գործերի կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքում և Աշոտ Խումարյանի հետ միասին խմբագրում հայերեն լեզվով լույս տեսնող «Կարմիր բանվոր» թերթը։

Հայկ Գյուլիքևխյանի գործունեության Աստրախանի շրջանի մասին իր ժամանակին հետաքրքիր հուշեր է թողել մեր անվանի գեղասան և ռեժիսոր, պրոֆեսոր Վավիկ Վարդանյանը։ Նա «Արվեստ» ամսագրի 1961 թ. № 4-ում տպագրած իր հուշերում պատմում է քաղաքացիական պատերազմների այն «բուռն օրերի» մասին, որ ապրում էր Աստրախանը 1918 թ.։ «Բաքվի կոմունայի անկումից հետո,— գրում է Վ. Վարդանյանը,—գերմանական հրամանատարության օգնությունը վայելող թուրքական գորքերի առաջխաղացումը գաղթի էր մատնել Բաքվի, Դերբենտի, Ղուբայի, Շամախու և Պորտ-Պետրովսկու հայ բնակչությանը, որը ապաստանել էր սովետական Աստրախանում։ 150 հազարից ավելի հայեր էին կուտակվել այդ քաղաքում... 1918 թվականի օգոստոսի 15-ին, երբ քաղաքում հենց նոր էր լիկվիդացվել կոնտրռևոլյուցիոն հերթական մի դավադրություն, լուր տարածվեց, որ բանաստեղծ Վահան Տերյանը Մոսկվայից ժամանել է Աստրախան՝ հայ գաղթականների վիճակը թեթևացնելու նպատակով... Եվ ահա, հիշում եմ, մի օր հայտարարեցին, որ ժողով է լինելու դրպրոցներից մեկի մեծ դահլիճում։ Ինչքա՜ն մարդ էր հավաքվել... Բոլորը ծարավի էին մի նոր խոսքի՝ իրենց վիճակի ու Կովկասի դրության մասին։ Տերյանը խոսում էր սովետական իշխանության, Լենինի մասին, ազգային այն քաղաքականության մասին, որ տանում էր բոլշևիկների կուսակցությունը»։

Վ. Վարդանյանը այնուհետև պատմում է, որ Հայկական գործերի կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքը զբաղվում էր նաև կուլտուր-լուսավորական, մշակութային գործերով։ «Մի օր էլ ինձ կանչում են կոմիսարիատ։ Ինձ հետ գրուցողը մեծ հարգանք է ներշնչում։ Խոսում է մի նոր կուլտուրական հեղափոխության անհրաժեշտության, ժողովրդի գեղարվեստական դաստիարակության գործում արվեստի մեծ դերի մասին։ Ու այնպես լրշախոհ ու պարզ, որ յուրաքանչյուր խոսքը տպավորվում է մտքիդ մեջ։ Հետո «կոնկրետին» է անցնում։ Առաջարկում է գլխավորել թատերախումբը, խորհուրդներ է տալիս խաղացանկի մասին, ինչ պիեսներ ընտրել ու պատրաստել, ինչ սկզբունքներով առաջնորդվել։ Մոսկվայի գեղարվեստական թատրոնը և գերմանական նշանավոր ռեժիսոր Մաքս Ռեյնհարդի աշխատանքը վկայակոչելով

նշում է, որ արվեստը հասարակությանը պիտի ծառայի, առաջավոր գաղափարներ պաշտպանի, իսկ որպեսզի հասնի այդ բանին, նախ առողջ, մխաձույլ կոլեկտիվ պիտի ունենա...

Կլանված լսում եմ նրա խոսքերը ու անմիջապես գործի անցնելու ցանկություն է առաջանում մեջս։ Երբ ես դուրս եկա նրա մոտից, հարցուփորձ արի՝ ով է, որտեղից է... 11-րդ բանակի դասախոս է, նոր է վերադարձել Գերմանիայից, շատ պատրաստված մարդ է, անունն էլ Հայկ Գյուլիքևխյան...»։

Գերմանիայում երկար տարիների պանդխտությունից հետո Աստրախանը դառնում է Գյուլիքևխյանի գործունեության առաջին հարազատ վայրը, որտեղ նա սկսում է զբաղվել հայկական մշակութային գործերով։

1920 թ. հուլիսին ՌԿԿ Կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշմամբ Հայկ Գյուլիքևխյանը ուղարկվում է Գրոզնի՝ կուսակցական աշխատանքի։ Նա նշանակվում է քաղաքային կոմիտեի ագիտբաժնի վարիչ և քարտուղար։ 1920 թ. դեկտեմբերին Հայկ Գյուլիքևխյանը մոբիլիզացիոն կարգով աշխատանքի է ուղարկվում Հայաստան, որտեղ նոր էին սովետական կարգեր հաստատվել։ Սկզբում նա նշանակվում է Երևանում ռուսերեն լեզվով նոր լույս տեսնող «Коммунист» թերթի խմբագիր։ 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ժամանակ նա գտնվում է Ղամարլուի ռազմաճակատում, որպես երկրորդ գնդի քաղղեկ՝ զենքը ձեռքին կռվում է դաշնակների դեմ։ Ավանտյուրայի ճնշումից հետո նորից խմբագրում է նույն «Коммунист» թերթը։ Այնուհետև 1921 թ. մայիսին նշանակվում է Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) կուսակցական գավառային կոմիտեի կուլտպրոպ բաժնի վարիչ, միաժամանակ խմբագրելով «Կարմիր Շիրակ» թերթը։

1923 թ. Հ. Գյուլիքևխյանը փոխադրվում է Երևան՝ կուսակցական և գիտական աշխատանքի։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, նկատի առնելով Հայկ Գյուլիքևխյանի գիտական արժանիքները, նրան միաժամանակ նշանակում է Երևանի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր։ Այդ տարիներից էլ սկսվում է նրա գործունեության նոր շրջանը, երբ նա հրապարակ է գալիս որպես կուսակցական ղեկավար գործիչ, գիտնական, փիլիսոփա, գրականագետ, հրապարակախոս լայն իմաստով։ Լ. Ղարիբջանյանն իր «Երևանի պետական համալսարանը» աշխատության մեջ (1965 թ.) գրել է. «Համալսարանի միջնորդությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1923 թվականին համալսարան աշխատանքի է ուղարկում ՍՄԿՊ անդամ Հայկ Գյուլի-Քևխյանին, որը մի քանի տարի աշխատում է նաև որպես ուսումնական գծով պրոռեկտոր։ Գյուլի-Քևխյանը կարճ ժամանակում դառնում է ուսանողների սիրելին։ Նրանք մեծ ակնածանքով էին խոսում իրենց «Գյուլիի» մասին, հիանում նրա լայն մտահորիզոնով ու խոր իմացությամբ»։

Իսկ Երևանի նորաստեղծ համալսարանը այդ տարիներին դարձել էր վերածնվող հայ ժողովրդի գիտության առաջին տաճարը, ուր նորից սկսել էր վառվել բազմադարյան հայ մտքի լուսավոր ջահը։ Հայկական գիտության նոր կաճառում այդ տարիներին աշխարհի բոլոր ծայրերից հավաքվում էին գիտության տարբեր ճյուղերի ականավոր հայ մասնագետները՝ հայագիտության գծով այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին պատմաբաններ Լեոն (Առաքել Բաբախանյան), Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, լեզվաբանության ու բանասիրության գծով՝ Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Ցոլակ Խանդադյանը, Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գևորգ Ասատուրը, Սիմոն Հակոբյանը, բժշկագիտության գծով՝ Լևոն Հովհաննիսյանը, պրոֆ. Քեչեկը, Միրզա-Ավազյանը, Վահան Արծրունին, քիմիայի գծով՝ Ստեփան Ղամարյանը, ֆիզիոլոգիայի գծով՝ Տիգրան Մուշեղյանը, իրավագիտության գծով՝ Գրիգոր Զուբարը և ուրիշներ, որոնցից շատերը եվրոպական կրթություն ստացած անվանի գիտնականներ էին։

Գիտնականների հին սերնդի ներկայացուցիչների գաղափարական դաստիարակության գործում Գյուլին ուսուցչի, փորձառու խորհրդատուի դեր էր

կատարում։ Պատահական չէր այն բարձր պատկառանքը, որ բոլորը տածում էին դեպի նա։ Այդ տարիներին Գյուլին միշտ շրջապատված էր անվանի գրողներով, գրականագետներով, ճարտարապետներով, բժիշկներով, դերասաններով, ռեժիսորներով։ Նրա մտերիմներն ու բարեկամներն էին գրականագետներ Սարգիս Մանուկյանը, Սիմոն Հակոբյանը, բժիշկ ու դրամատուրգ Ստեփան Բաղդասարյանը։ Նրա մտերիմն ու բարեկամն էր մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը։ Նրա մտերիմներից էր նաև անվանի դերասան, դրամատուրգ և ռեժիսոր Վաղարշ Վաղարշյանը։ Վերջինս իր հուշերի առաջին գրքում, որը կոչվում է «Ընկերներս, բարեկամներս և ես», ջերմ տողեր է նվիրել Հ. Գյուլիքևխյանին։ Իր գրքի այն մասում, որտեղ խոսում է ծննդավայրի, մասնավորապես Շուշվա իր մտերիմների մասին, Գյուլիքևխյանի մասին գրել է. «Ով կարող էր ենթադրել, որ այդ լռակյաց, արտաքուստ մռայլ, էությամբ ամոթխած երիտասարդը հետագայում պետք է դառնա մարքսիստական գրականագիտության ականավոր դեմք։ Դեռ մինչև այսօր էլ,— գրում է Վաղարշյանը,— անվիճելի են համարվում գրական երկի, նրա կառուցվածքի, կերպարի ու տիպականի մասին նրա տված բնորոշումները, որոնք անշուշտ մնալու են որպես սովետական էսթետիկայի հիմնական դրույթների սաղմեր։ Նա կրթել ու դաստիարակել է մի ամբողջ սերունդ մարքսիստ փիլիսոփաներ, արվեստի տեսաբաններ, գրականագետներ ու քննադատներ։ Այժմ հայտնի է դարձել, որ նա Կարլ Լիբկնեխտի և Ռոզա Լյուքսեմբուրգի հետ մեր դարու սկզբներին մասնակցել է գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպմանը ու հիմնադրմանը...» (էջ 31)։

Առհասարակ Գյուլիքևխյանի Գերմանիայում եղած ժամանակաշրջանը դեռևս չուսումնասիրված կողմեր ունի։ Նրա շատ զուսպ գրված կենսագրությունում քիչ տեղեկություններ կան կյանքի այդ շրջանի վերաբերյալ։ Մինչդեռ հայտնի է, որ նա Գերմանիայում ունեցել է ընտանիք՝ կին, երկու արու զավակներ, որոնց փնտրելու նպատակով 1922 թ. հուլիսին երկու ամսով Գերմանիա է գնացել։ Օգոստոսին վերադառնում է Գերմանիայից ձեռնունայն, քայքայված ներվերով, հոգեկան ծանր ապրումներով։

Քսանական թվականներին լրացրած անկետայում կարդում ենք, որ ՌՍԴԲԿ կուսակցության անդամ է 1906 թ., գլխավորապես աշխատել է գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Լայպցիգի, Հայդելբերգի կազմակերպություններում։ Հայտնի է, որ նա անձնական կոնտակտի մեջ է եղել գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի ղեկավարների, մասնավորապես Ռոզա Լյուքսեմբուրգի, Կարլ Լիբկնեխտի և մյուսների հետ, որոնք եղել են գերմանական կոմկուսի և Սպարտակ միության հիմնադիրները, 1918 թ. գերմանական հեղափոխական իրադարձությունների ղեկավարները։

Գյուլիքևխյանը շատ զուսպ, պարկեշտ, միշտ անձնականը հետին պլանի վրա պահող անձնավորություն էր։ Նրա աշակերտ, պրոֆեսոր Հենրի Գաբրիելյանը իր «Հայ փիլիսոփայական մտքի պատմության» քառահատոր գրքի չորրորդ հատորում, խոսելով սովետահայ փիլիսոփայական մտքի կազմավորման մասին, առաջին հերթին հիշատակում է պրոֆեսոր Հայկ Գյուլիքևխյանի անունը, նրան համարելով Սովետական Հայաստանի փիլիսոփայական մտքի ռահվիրան։ «Այդ նա էր, որ գլխավորեց Երևանի պետական համալսարանի առաջին փիլիսոփայական ամբիոնը, որը արդարացի կերպով երկար տարիներ կոչվում էր նրա անունով։ Այդ բազմակողմանի գիտելիքների տեր մարդու օգնությամբ ամբիոնը խոշոր գործ կատարեց նոր երիտասարդ կադրերի աճեցման ուղղությամբ։ Նրա աճեցրած ու դաստիարակած կադրերը դարձան հանրապետության բուհերի դասախոսներ և հետագայում շոշափելի աշխատանք կատարեցին Հայաստանում փիլիսոփայական գիտության զարգացման գծով»։

Հ. Գյուլիքևխյանը մեծ երախտիք ունի նաև հանրապետության մի շարք գիտական հիմնարկների ստեղծման ու ղեկավարման գործում։ Այսպես, նրա ջանքերով 1931 թ. կազմակերպվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, գա-

ղափարախոսական այն կենտրոնը, որը իրականացնելու էր մարքսիզմ-լենինիզմի դասականների երկերի հայերեն թարգմանությունն ու պրոպագանդումը։ Այդ գաղափարախոսական հաստատությունը գլխավորեց Գյուլիքևխյանը։ Նրա շուրջը կենտրոնացան երիտասարդ փիլիսոփայական, տնտեսագիտական կադրեր, որոնց եռանդուն ջանքերով սկսեցին հայերեն թարգմանվել Մարքսի, Էնգելսի և Լենինի հիմնական աշխատությունները։ Գյուլիքևխյանը գլխավորեց նաև Լուսժողկոմատին կից նոր կազմակերպված գրականության ու պատմության ինստիտուտը և մի շարք այլ գիտական հիմնարկներ։ 1923 թ. մինչև 1929 թ. Գյուլիքևխյանն ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ։

Բացի փիլիսոփայություն առարկայից նա դասախոսություններ է կարդացել ռուսաց և եվրոպական գրականություն և գրական քննադատություն առարկաներից ռուսական մանկավարժական ինստիտուտում։ Իր կյանքի վերջին տարիներին նա գիտահետազոտական աշխատանք էր տանում գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում, որտեղ ստեղծեց մի շարք գիտական գործեր եվրոպական, ռուսական և հայ գրականության գիտական արժեք ներկայացնող հարցերի շուրջը։ Նրա թողած գրական ժառանգությունն այսօր էլ պահպանում է իր գիտական նշանակությունը։

Պրոֆեսոր Հայկ Գյուլիքևխյանը, լինելով գրականագիտական լայն մտահորիզոնի տեր տեսաբան, հավասարապես զբաղվում էր ինչպես եվրոպական, այնպես էլ ռուս և հայ դասական ու արդիական գրականության հարցերով։ Նրա գրականագիտական տաղանդին մատչելի էին արվեստի ու գրականության համարյա բոլոր ճյուղերն ու ժանրերը։ Նույն իրազեկությամբ և իմացությամբ նա խոսում ու գրում էր ինչպես Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Հեգելի, այնպես էլ Պուշկինի, Բելինսկու, Չեռնիշևսկու, Դոբրոլյուբովի, Գորկու, Պլեխանովի, Աբովյանի, Շիրվանզադեի, Սունդուկյանի և սովետահայ դրամատուրգիայի, հայ թատրոնի ու կինոարվեստի անվանի ներկայացուցիչների մասին։ Գյուլիքևխյանը 1920-ական թթ. Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հիմնադիրներից մեկն էր և լրջորեն հետևում է նորածիլ գեղարվեստական գրականության զարգացման կենդանի պրոցեսին, քննադատների մի ամբողջ սերունդ է աճել նրա հոգատար ու բանիմաց ուշադրության ներքո։ Սովետահայ գրականության ամեն մի նշանակալից երևույթի մասին նա գրել ու խոսել է իրեն հատուկ օբյեկտիվությամբ, դրվատել է լավը, քննադատել ու մերժել անընդունելին։ Այդ տեսակետից սովետահայ գրական քննադատության ավագ սերունդը իր ժամանակին շատ բան սովորեց քննադատության «նահապետ» Գյուլիից։ 1920—30-ական թթ. Գյուլիքևխյանը բազմաթիվ հրապարակային զեկուցումներ է կարդացել և հոդվածներ գրել պրոլետարական նոր գրականության զարգացման ու վերելքի մասին։ Նշանակալից է 1930 թ. «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսած «Գեղարվեստական գրականության հիմնական խնդիրները» հոդվածաշարը, որտեղ նա քննադատում էր պրոլետարական գրականության ստեղծման դեմ ծառացող այդ ժամանակների նիհիլիստներին (պրոլետկուլտականներին՝ Վորովսկուն, Վարդինին և այլոց)։

Գյուլիքևխյանը անընդհատ պայքարել է գրականության և արվեստի բարձր գաղափարայնության համար, որովհետև գաղափարազուրկ արվեստը, ըստ նրա, բարոյալքում է մարդկանց ոգին։ Նա գիտակցում էր, որ մեր դարաշրջանում մարդկության առաջադեմ ուժերին համախմբող և զոդող ուժը նախ և առաջ առաջավոր գաղափարներն են։ 1920—30-ական թթ. նա եղել է մեր գաղափարախոսական մարզի «ծանր հրետանին», նրա կյանքի բարձր խորհուրդն էր անմնացորդ ծառայել կոմունիզմի վեհ իդեալին։

Համեմատաբար մեծ չէ Հ. Գյուլիքևխյանի թողած գրական ժառանգությունը, որի մի մասը ժամանակին հրապարակվել է պարբերական մամուլում և առանձին գրքերով, իսկ մի զգալի մասն էլ մնացել անտիպ և պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում։ Տպագրված գործերից ուշադրության արժանի են հայ դրականության գծով՝ Խ. Աբովյանին, Ռ. Պատկանյանին, Ռաֆֆուն, Ալ. Շիրվանզադեին, Գ. Սունդուկյանին նը-

վիրված հոդվածները, այնուհետև այն աշխատությունները, որոնք նվիրված են հայ և ռուս դրամատուրգիայի հարցերին։ Գրականագիտական հատուկ ուշադրության արժանի գործ է «Պուշկինի գեղագիտական հայացքները դրամատուրգիայի վերաբերյալ» հոդվածը, որտեղ զարգացվում է այն կարևոր միտքը, որ Պուշկինը ոչ միայն ռուս ժողովրդի ազգային մեծ պոետն է, այլ առանձնահատուկ տեղ է գրավում ռուսական գեղագիտության և քննադատության մեջ։ Պուշկինը առաջինը ձևակերպեց գեղագիտական մի շարք հիմնական դրույթներ, որոնք հետագայում զարգացրեց հանճարեղ Բելինսկին։ Այնուհետև հեղինակը այս ոչ մեծ աշխատության մեջ խորացնում է այն կարևոր միտքը, որ պուշկինյան գեղագիտության առաջադեմ բնույթն ու մարտական ոգին ավելի ցայտուն դրսևորվեցին դրամատուրգիայի մասին եղած նրա մի շարք գրառումների մեջ, որտեղ Պուշկինը հատուկ ու որոշակի ձևակերպում է իր հայացքները, խոր ընդհանրացումներ անում՝ ավելի պարզորոշ հանդես գալով որպես ճշմարտության ջատագով գրականության մեջ, որպես ռեալիստական ուղղության պաշտպան, որպես բովանդակության էսթետիկայի ներկայացուցիչ։

Հ. Գյուլիքևխյանի աշխատությունների ցանկում նշանակալից տեղ են գրավում Մաքսիմ Գորկու, Իլ. Ճավճավաձեի և այլոց մասին գրված բազմաթիվ հոդվածները, որոնք իրենց բովանդակությամբ և ուղղվածությամբ խոսում են նրա գրականագիտական լայն մտահորիզոնի ու հետաքրքրությունների մասին։ Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում «Շեքսպիրը նախասովետական հայ քննադատության մեջ» և «Ադամյանի Շեքսպիրը» հոդվածները։ Առաջինում նա մանրամասն խոսում է այն մեծ ազդեցության մասին, որ արևմտաեվրոպական դասական դրամատուրգիան ու գրականությունն առհասարակ, ունեցել են հայ ժողովրդի կուլտուրական զարգացման ու նրա դրականության բեղմնավորման վրա։

Այսօր շեքսպիրագիտությունը հսկայական չափերով է մուտք գործել հայ արվեստագիտության մեջ։ Սակայն սովետահայ շեքսպիրագիտությունը չի կարող անտեսել այն գրականագետներին, որոնք առաջին քայլերն են արել այդ ուղղությամբ։ Դրանցից մեկը հենց Գյուլիքևխյանն է։ Նա իր հոդվածներում նախ ծանոթացնում է ընթերցողին Շեքսպիրի գործերի հայերեն թարգմանության պատմության հետ, այնուհետև խոսում է այն դերի մասին, որ կատարել է հայ խոշորագույն դերասան Պ. Ադամյանը շեքսպիրյան գործերի իր բեմականացման ու Շեքսպիրի մասին գրած գրքույկով։ «Նախասովետական հայ թատրոնի գործիչներից ոչ մեկը այնպիսի չափերով չի նպաստել Շեքսպիրի մեծաշունչ ողբերգությունների ժողովրդականացմանը հայ իրականության մեջ, որքան Պետրոս Ադամյանը։ Ոչ լրիվ մի տասնամյակի ընթացքում միայն հանդես գալով Համլետի, Օթելլոյի, Լիրի դերերում, փայլուն հանճարով օժտված մեր ողբերգուն խոշորագույն ազդակներից մեկն է եղել հայ բեմական կուլտուրայի զարգացման մեջ, գամել է իր վրա ոչ միայն հայ, այլ նաև ռուս հասարակության ուշադրությունը և դասվել Համլետի բեմական կերպարը կերտող համաշխարհային վարպետների շարքը։ Ադամյանը բավական չհամարեց իր բեմական գործունեությամբ միայն զարկ տալ Շեքսպիրի հուչակի տարածմանը։ Նա պահանջ էր զգում իր սիրած հեղինակի ստեղծագործությանը հայ հասարակությանը իրազեկ դարձնել նաև տպագիր խոսքի միջոցով։ Նա միտք հղացավ մի շարք փոքրիկ աշխատություններ գրել՝ նվիրված իր ներկայացրած հերոսների—առաջին հերթին Համլետի, Օթելլոյի, Լիրի գրական-հոգեբանական բնութագրմանը, ինչպես նաև նրանց բեմականորեն մարմնավորելու մեջ իր կիրառած ցուցմունքներին, մոտեցումներին և հնարներին»։

Պրոֆեսոր Գյուլիքևխյանի գրական աշխատասիրությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Ռաֆֆու «Կայծերի» և Ռափայել Պատկանյանի գեղարվեստական արձակի մասին գրված ծավալուն գործերը, որոնցում՝ բարձր գնահատվեցին Ռաֆֆու ու Պատկանյանի՝ իբրև հայ ազգային-ազատագրական պայքարի նախակարապետների, ներշնչողների անունն ու գրական վաստակը։ Հ. Գյուլիքևխյանը հենց այն կարգի գրականագետներից

էր, որի կողմից Րաֆֆուն ու Պատկանյանին տված գնահատականները արժանի են ամենայն դրվատանքի։ Որ Րաֆֆին եղել է նրա սիրած հեղինակներից մեկը, երևում է «Կայծեր» վեպի մասին գրված խոր վերլուծական հոդվածից։ Ինչպես Աբովյանը, Ռ. Պատկանյանը, գրում է Հայկ Գյուլիքևխյանը, այնպես էլ Րաֆֆին իրենց երկերում արծարծել են հայության ազգապահպանության խնդիրը։ Այդ խնդիրը հուզել է XIX դարի ամբողջ հայ գրականությանը, եղել է նրա լեյտմոտիվը։ Այս հարցը քաղաքական ցայտուն կերպարանք է ստացել ազգայրն-ազատագրական պայքարի գաղափարաբանության Րաֆֆու ծրագրում։ Անվանի գիտնականը «Կայծերի» գաղափարական բովանդակությունը համարում է Արևմայան Հայաստանի ազգային դեմոկրատական ազատագրական պայքարի ու հաղթանակի ծրագիրը։

Գյուլիքևխյանի մանկության, դպրոցական և կյանքի շատ երկար տարիների, պայքարի ու աշխատանքի ընկեր, բազմավաստակ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը նրա մասին դրած հուշերում ասում է. «Այսօրվա սերունդն ի վիճակի է դատելու Գյուլիքևխյանի մասին սոսկ նրա գրական ժառանգության հիման վրա։ Սակայն գիտնականի և գաղափարական գործչի նշանակությունը միշտ չէ, որ չափվում է նրա գրվածքների քանակով։ Գրական-գիտական իրողությունների կենդանի ազդակները հաճախ մնում են վարագույրի ետևում... Հայկ Գյուլիքևխյանը մեկն էր սովետահայ այն մարքսիստ դիանականներից, որոնք ազգեցության խոր հետքեր են թողել սովետահայ դրականագիտության մեջ և բեղմնավորել սովետահայ գրողներից ոմանց տաղանդի հասունացումն ու դրսևորումը։ ...Գրական երիտասարդ այդ կադրերի մաքերի ու զգացմունքների զարգացմանը նա օժանդակում էր ոչ միայն իր հանրագիտական հմտություններով, այլև իր առինքնող, շիտակ ու վճիտ բնավորությամբ ու անհատականությամբ...»։

ВИДНЫЙ УЧЕНЫЙ И ПЕДАГОГ

(К 100-летию со дня рождения Гайка Гюликевхяна)

В. В. КАЗАНЧЯН

Резюме

Видный философ-марксист и литературовед Гайк Габриелович Гюликеахян родился в 1886 г. в городе Шуше (Нагорный Карабах) в семье народного учителя. В период первой русской революции он был одним из организаторов социал-демократических кружков в родном городе. С 1906 по 1918 гг. находился в Германии— учился в Иенском, Лейпцигском и Гейдельбергском университетах; в 1914 г. окончил философский факультет Гейдельбергского университета. За годы учебы он принимал активное участие в социал-демократической организации Германии, находился в контакте с вождями левого крыла этой организации Карлом Либкнехтом и Розой Люксембург. В начале первой мировой войны он как русский подданный и политически неблагонадежный человек был арестован германскими властями. В 1918 г. после освобождения из плена Г. Гюликевхян переезжает в Москву, назначается на партийную работу вначале в Астрахани, затем в Грозном, а в 1920 г. переезжает в Армению. В 1923 г. назначается проректором Ереванского университета и заведующим кафедрой философии. Одновременно он работает заведующим культпропотделом ЦК КП Армении и секретарем по идеологической работе. Профессор Г. Гюликевхян имеет большие заслуги в идеологической жизни республики. Он был здесь признанным главой марксистской философии и литературоведения, одним из основателей ассоциации пролетарских писателей. Он написал целый ряд литературоведческих трудов как об армянской классической и современной литературе, так и о русской и западноевропейской; эти труды до сих пор сохраняют научную ценность.